



## Վ.Բ.Ը. Միութեան Մելգոնեան Կրթական Հաստատութիւն Ճշմարտութեան Սիրոյն

### «Մելգոնեան Սանուց Միութիւն եւ Բարեկամներ» կազմակերպութեան խօսքը

#### Մելգոնեանի Փակումը եւ Մելգոնեանցիներու Ընդդիմութիւնը

Մելգոնեան Կրթական Հաստատութեան (Մ.Կ.Վ.) նուիրեալ եւ մտախոռով շրջանաւարտներ, աշխարհի ամէն կողմերէն համախմբուելով կազմած են «Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ» (Melkonian Alumni & Friends, [www.melkoniannews.org](http://www.melkoniannews.org)) ոչ-հասութեաբեր կազմակերպութիւնը, որուն գլխաւոր նպատակը եղած է դէմ կենալ եւ կասեցնել ծրագրուած փակումը եւ կալուածներուն վաճառքը՝ հայ մշակոյթի եւ դպրութեանց դարբնոց՝ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան:

Ինչպէս ծանօթ է, ՎԲԸ Միութեան վարչութեան Մարտ 2004-ի տիրահոշակ որոշումով «Մելգոնեան»ը Յունիս 2005-ին փակուեցաւ, կազմալուծուեցաւ եւ դադարեցաւ գործել որպէս երկուսեւ գիշերօթիկ երկրորդական հայկական վարժարան: Շատ չանցած ՎԲԸ-ի նախագահ Պրն. Պերճ Մեդրակեանի կարգադրութեամբ Մելգոնեանը բարեսիրաբար փոխ տրուեցաւ Կիպրոսի Կրթական Նախարարութեան որպէսզի երկու տարուայ համար դպրոցական շէնքերն ու բոլոր յարմարութիւնները գործածուին՝ 500-է աւելի աշակերտութիւն ունեցող Նիկոսիոյ Աղլանճայի Կիմնագիտմի կողմէ: Երկու տարին վաղուց անցած է արդէն, բայց Աղլանճայի Կիմնագիտմը կը շարունակէ հաստատ մնալ եւ ցրիօրէն օգտագործել Մելգոնեանի կալուածները:

#### Մելգոնեանցիներու «կոչ»ը

Համաշխարային բոլոր Մ.Կ.Վ. Սանուց Միութիւններու կողմէ վերջերս Սփիւքի եւ Հայաստանի բոլոր թերթերուն մէջ հրատարակուեցաւ «կոչ» մը եւ ստորագրահաւաքի արշաւ, «Մելգոնեան»-ը վերաբանալու մասին: Փափաքողներ կրնան այցելել [www.midk.org](http://www.midk.org) կայքէջը եւ մասնակցիլ ստորագրահաւաքին, հայերէն կամ անգլերէն:

#### Ենովք Պալիկեան Կը Հակադէ...

Ընթացիկ տարուան Յունիսի սկիզբները, Լոս Անճելըսի մի քանի հայատառ թերթերու մէջ հանդէս գալով, «ՎԲԸ-ի հաւատարման անդամներէն մէկը» Պր. Ենովք Պալիկեան, որ «պաշտօնական որեւէ հանգամանք չունի», ինքզինքին իրատուք կուտայ պաշտպան կանգնելու ՎԲԸ-ին եւ ՎԲԸ-ի ներկայ ղեկավարներուն վարած քաղաքականութեան՝ մասնատրաբար Մելգոնեանի փակման եւ կալուածներու վաճառման առնչութեամբ, միեւնոյն ատեն մոլեռանդօրէն իր մտածն ու զայրոյթը «շոյալելով» Մելգոնեան Սանուցի անդամներուն հասցէին:

Իր այս երկարապատում գրութենէն կրնանք հետեցնել որ Պր. Պալիկեան միայն «պարզ» ՎԲԸ-ական մը չէ, այլ՝ «զինտրագրեալ», իլու ու հնազանդ բայց մանաւանդ մոլեռանդ ՎԲԸ-ական մըն է:

Մոլեռանդութիւնը կը խորհինք թէ լաւ յատկանիշ մը չի կրնար նկատուիլ քանի որ մոլեռանդ մէկը յաճախ կը դադրի տրամաբանական ըլլալէ, սխալ վերլուծումներ կը կատարէ, չի՛ կրնար լաւ դիտել ու դատել եւ իր մոլուցքին մէջ անպայման կը տարուի իր դիմացինը վարկաբեկել՝ ցեխ արձակելով:

#### Ընդդէմ Մելգոնեան Սանուց Միութիւններու

Արդարեւ, իր անորակ գրիչով՝ Պր. Պալիկեան կը փորձէ անուանարկել աշխարհացրի Մելգոնեան Սանուց Միութիւնները որոնք աննկուն պայքար կը մղեն, ի գին ամէն զոհողութեան, հետապնդելով միայն մէկ վեհ նպատակ, այն է՝ վերաբացուած տեսնել «Մելգոնեան»ը, այլ մանաւանդ խափանել եւ չթոյլատրել «Մելգոնեան»ի կալուածներուն վաճառքը: Հոս տեղին է յիշել եւ յստակացնել որ Մելգոնեանցիներուն դատող ՎԲԸ Միութեան դէմ չէ՛, այլ՝ կը միտի միայն ու միայն «Մելգոնեան»ը բաց պահելու, որպէսզի ան շարունակէ իր առաքելութիւնը Կիպրոսի մէջ որպէս գիշերօթիկ երկրորդական վարժարան համայն հայութեան համար: Այս կապակցութեամբ, Մելգոնեանցիներ եւ բարեկամներ աշխարհի ամէն կողմերէն, դատապարտելով ՎԲԸ-ի կեդրոնական վարչութեան ազգավնաս որոշումը, սիրայօժար եւ առատաձեռնօրէն մասնակցեցան դատական ծախսերուն:

#### Ընդդէմ Դոկտ. Տէր Զաւէն Աւագ քին. Արգումանեանի

Պրն. Պալիկեան միշտ չէ որ գրիչ կը շարժէ: Իր անունը հազուադէպօրէն կը տեսնենք հայ մամուլի էջերուն մէջ: Մեր յիշողութեան մէջ է սակայն իր վերջին յօդուածը, ասկէ մօտ երեք տարի առաջ, որով ան, իր գրիչը դարձեալ ժահրոտ մելանի մէջ թաթխած՝ փորձեց պախարակել մեր յայտնի եկեղեցականներէն Դոկտ. Տէր Զաւէն Աւագ քին. Արգումանեանի նման հնուտ մտաւորական անձնատրութիւն մը, որ համարձակած էր ՎԲԸ-ի 100 ամեակին առիթով իր սրտցաւ մտահոգութիւնները մամուլի միջոցաւ արտայայտելու, «Մելգոնեան»ի փակման կապակցութեամբ...

#### Կեդրոնական Վարչութիւնը՝ «Անսխալական»

Ցաւալի է որ հայ ժողովուրդը իր պատմութեան ընթացքին պարբերաբար կոյր ու բուծ առաջնորդներու ենթարկուելով մխրճուած է անել կացութիւններու...:

Մեզի այնպէս կը թուի թէ ՎԲԸ-ի ներկայ պատկանելի վարչութիւնը մերթ ընդ մերթ կը զինտրագրէ որոշ անձեր՝ թերթերու մէջ Պատկանելի Վարչութեան թմբկահարութիւնը ընելու նպատակաւ: Ըստ Պր. Պալիկեանի, այնպէս կ'երեւի որ Պատկանելի Վարչութիւնը անսխալական է, սակայն իր այս յօդուածով ան յստակօրէն կը փաստէ ՎԲԸ-ի Պատկանելի Վարչութեան անձեռնհասութիւնը եւ ապիկարութիւնը՝ «Մելգոնեան»ը կառավարելու, «Մելգոնեան»ի կրթական եւ մանաւանդ ֆինանսական խնդիրները լաւագոյնս յանձանալու: «Մելգոնեանի փակումը 30 երկար տարիներու լուրջ օրակարգի հարց եղած է եւ ապա գործադրուած փակման անփոփոխելի եւ վերջնական ամէնադժուարին բայց իմաստուն ու հեռատես որոշումը» կը գրէ Պր. Պալիկեան:

#### Ինչո՞ւ Փակուեցաւ Մելգոնեանը

Դոկտ. Ագապի Նասիպեան-Էքմէքճեան ( ի դէպ՝ Պր. Պալիկեանին քենին) որ երկար տարիներ պաշտօնավարած է Մելգոնեանէն ներս որպէս ուսուցիչ եւ տնօրէն, «Մտածումներ Մելգոնեան Բարերարներու Օրուան Առթիւ» վերնագիրով յօդուածին մէջ հարց կուտայ.- «Ինչո՞ւ փակուեցաւ Մելգոնեան»ը եւ կ'ափսոսայ՝ «ո՛չ որ տակաւին հասկցած է պատճառը: Բայց եթէ թերացումներ եւ թերութիւններ կային, ինչո՞ւ չարբագրուեցան անոնք ժամանակին»: (Դոկտ. Նասիպեան-Էքմէքճեանի յօդուածը կարելի է կարդալ՝ այցելելով [www.melkonianforever.org](http://www.melkonianforever.org) կայքէջը [news/articles](http://news/articles) բաժնին տակ):

#### Հարցում Մը... «Մոլորեալ Աղմկարարներու» Կողմէ

Պր. Պալիկեանին եւ իրեն նման մտածողներուն հարց կուտանք... ՎԲԸ-ի իմաստուն եւ հեռատես ղեկավարներուն համար արդե՞օք 30 տարիները բաւարար չեղա՞ն Մելգոնեանի թերութիւններն ու թերացումները սրբագրելու...:

Պր. Պալիկեանը միայն պատշաճօրէն կը թմբկահարէ ՎԲԸ-ի ղեկավարներուն առաջ քշած պատճառաբանութիւնները Մելգոնեանը փակելու մասին, լորցնաշարթի փառաբանելով անոնց իմաստութիւնն ու անսխալականութիւնը...:

Յօդուածին մէջ, Մելգոնեան Սանուցի հասցէին փրփրեալի կարգ մը անարգական ու ատելավար որակումներէն, վերագրումներէն եւ զրպարտանքներէն դատելով՝ կրնանք եզրակացնել որ ՎԲԸ-ի ղեկավարութիւնը ճշմարտապէս խոցուած պէտք է ըլլայ Մելգոնեանցիներու «կոչին» եւ ստորագրահաւաքին պատճառաւ: Պր. Պալիկեան սարսափի մատնուած է կարծէք, երբ կը գրէ թէ՛ «Մելգոնեանցիներ անպատասխանատու մոլորեալ աղմկարարներ են, որոնք պիտի տապալեն եւ կործանեն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը..., ատելութիւն, ոյս եւ անչափ չարութիւն կայ անոնց հոգիներուն մէջ, որ կ'ուզեն կործանել հայկական բարեսիրական միութիւն մը...: Հայու ի՛նչ անվայել վարմունք է այս»: Եայլն, եայլն...:

#### Ընդվզում... Պահանջատիրութիւն... Նախաձեռնութիւն

Այս բոլորը անշուշտ պառաւական բարբառնաբանքներ են պարզապէս, անճիշտ, անհիմն եւ անհեթեթ, ուղղուած Մելգոնեան Սանուց Միութիւններու հասցէին, որոնք ջախջախիչ մեծամասնութեամբ,



## Հ.Բ.Ը. Միութեան Մեկգնեան Կրթական Հաստատութիւն Ճշմարտութեան Սիրոյն

### «Մեկգնեան Սանուց Միութիւն եւ Բարեկամներ» կազմակերպութեան խօսքը

աշխարհով մէկ, ընդվզումով միակամ ոտքի ելան նեցուկ կանգնելու մեր տարած աշխատանքներուն իրենց նիւթական եւ բարոյական աջակցութեամբ կասեցնելու համար Մեկգնեանի փակումն ու վաճառքը: Արդար պահանջատիրութեան միացաւ հայ մամուլը, զանազան կազմակերպութիւններ, Հայ ժողովուրդը:

Մեկգնեանի բարձրարժէք կալուածներուն շուտափոյժ վաճառքը բացորոշ էր եւ անշուշտ կարելի պիտի դառնար եթէ Կիպրոսի Սանուցի նախաձեռնութեամբ չհրագործուէր հետեւեալը: Կիպրոսի կառավարութիւնը գիտակցելով ՄԿՀ-ի պատմական, մշակութային եւ ազգային արժէքին՝ յատուկ հրամանագրով սը (Մարտ 31, 2008) հաստատեց Մեկգնեանի շէնքերուն եւ 40 էջքը ընդհանուր հողատարածքին 60 տոկոսին անձեռնմխելիութիւնը՝ իբրեւ պատմաճարտարապետական ազգային ժառանգութիւն, իսկ յարակից պուրակը՝ որպէս «կանաչ գօտի»:

Այս կանոնագրութիւնը թէեւ կը նուազեցնէ կալուածներուն դրամական արժէքը, բայց եւ այնպէս կը խոչընդոտէ զայն վաճառելու կարելիութիւնը, քանի որ օրէնքը նոյնպէս խստի կ'արգիլէ կալուածներու որեւէ ձեւափոխում:

#### Մեր Մեծագոյն Կորուստը

Սփիւռքահայ որեւէ դպրոցի փակումը մեր մեծագոյն կորուստն է: Արեւմտահայութեան մշակոյթին ու լեզուին բնաջնջումը իրագործելու ամէնակարճ միջոցը դպրոց փակելն է, հոգ չ' թէ ինչ ըլլայ այդ արարքին տուն տուող պատճառը, իմաստութիւնը, կամ բացատրութիւնը: Կարելի չ' լրիւ իրագործել Հայաստանի բարգաւաճումը՝ անդամահատելով, տկարացնելով եւ աղաւաղելով սփիւռքահայ մշակոյթը, հայեցի ուսման ու կրթութեան ենթակառոյցը:

#### Բարերարներուն Նպատակը, Տեսլականը, Կտակը...

Պր. Պալիկեանի ընտանեկան պարագաներուն Մեկգնեանի ըլլալը որքան որ իրաւասութիւն կուտայ իրեն պաշտպանելու ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութեան կողմէ ՄԿՀ-ի փակումը, մեր Մեկգնեանի ըլլալն ալ նոյն չափով իրաւասութիւն կուտայ մեզի պաշտպանելու ՄԿՀ-ի յարատեւ գոյութիւնը իր ներկայ հողերուն վրայ:

Ազգային մեծագոյն բարերար Կարապետ Մեկգնեանի հետեւեալ խօսքերը որքան դիպուկ են եւ յիշատակելի. «Ես այս դպրոցը կը շինեմ Ազգիս վրէժը լուծելու համար...: Թորքը մեզ մաղէ անցուց, չարդեց նախ մեր մեծերը, մեր վարիչները ու ապա՝ մեր ամբողջ անտէր ազգը...: Այդ որք ձագովկները պէտք է իրենց հօրենական տունը նորէն շինեն, եւ անոնցմէ պէտք է պատրաստենք մեր մեծերը... կը փափաքիմ որ Մեկգնեան կրթական այս հաստատութիւնները տեսն դարձնուին ըլլան լուսատրութեան վառարաններ՝ տալու համար հայ ազգին, հայ հայրենիքին եւ մարդկութեան օգտակար եւ պարկեշտ նկարագիրով անդամներ»: Այս էր բարերարներուն տեսլականը եւ այս նպատակին համար էր որ անոնք հայ ազգին կտակեցին իրենց վիթխարի հարստութիւնը որուն միայն տոկոսով հաստատութիւնը պիտի տեւէր դարձնուին:

#### Աղմուկ՝ Ազգավնաս Արարքի Մը Դէմ

Արդարեւ Մեկգնեանի հարցը իրաքնաչիւր սփիւռքահայի հարցն է, իրաւականէն շատ աւելի բարձր: Կը յուսանք որ այս հարցին շուրջ Պր. Պալիկեան իր ընտանիքի Մեկգնեանի անդամներուն հետ վէճի մէջ չէ...

Մեր Մեկգնեանի ըլլալը նաեւ իրաւունք կուտայ մեզի «աղմկարար» ըլլալու եւ դրդալից աղմուկ բարձրացնելու կատարուած ազգավնաս արարքի սը դէմ:

To raise hell! Ինչպէս կ'ըսուի անգլերէնով: Դժոխային աղմուկ սը պէտք է, եւ առանց դադարի, արծարծ պահելու համար Մեկգնեանի հարցին հրատապութիւնը ո՛չ միայն աշխարհացրի Մեկգնեանիներու այլեւ սփիւռքի եւ հայրենիքի լայն շրջանակներէն ներս:

#### «Փողոց Իջնել»...

«Հայկական որեւէ լուրջ կազմակերպութիւն չ'արտօներ ինքզինքին փողոց իջնել կամ պատասխաններ տալ անհատներու կամ խմբակցութեան սը...» կը վճռէ Պր. Պալիկեան: Չենք գիտեր, ի՞նչ կը նշանակէ «փողոց իջնել»: Արդեօ՞ք նուաստացուցիչ է փողոց իջնել եւ ժողովուրդին հետ յարաբերիլ: Իսկապէս ա՞յս է արդեօք ՀԲԸՄ-ի ղեկավարներուն հոգեբանութիւնը: Արեւմտեան երկիրներու մէջ նոյնիսկ կառավարութիւններ, նախագահներ, կը պատասխանեն անհատներու հարցումներուն եւ մտահոգութիւններուն... փողոց իջնելով:

Կը զարմանանք թէ ինչո՞ւ ՀԲԸՄ-ի ղեկավարները Պր. Պալիկեանի նման մէկը պիտի գործածէին, պարզապէս հակադարձելու Մեկգնեանիցիներուն բարձրացուցած «աղմուկին»: ՀԲԸՄ-ի նման մեծ կազմակերպութեան համար «աղմկարարներու» հետ վարուելու լուրջաբար ձեւը պիտի ըլլար զանոնք անտեսել:

#### Երոպայի Մէջ Ազնուափայլ Եւ Յարգելի Տիկին Մը...

Սակայն երբ նկատի կ'առնենք յօդուածին ատելավառ ու մաղձոտ բովանդակութիւնը, կը սղոյնք եզրակացնելու թէ ՀԲԸՄ-ի համար Մեկգնեանիցիները կը նկատուին «խռովարար թշնամիներ» որոնք պէտք է զգեստուին...: Պր. Պալիկեան կը սոռնայ որ իր կողմէ «ինքնակոչ աղմկարար» որակուող «մարդիկը» երբեմնի ՀԲԸՄ-ի կողքին բեղուն եւ գործօն անդամներ էին, երբ «անդամակցութիւն» գոյութիւն ունէր...: Ցաւալի է նաեւ որ յարձակումի թիրախ դարձած է «երոպայի մէջ նուիրեալ միութենական, ազնուափայլ եւ յարգելի տիկին սը» որ իբր թէ ՀԲԸՄ-ի ղեկավարներու մի քանիներէն ներդրած՝ դիս ու ատելութիւն ունի եղեր... եւ վրէժ առնելու համար ինք ալ միացած է այս աղմկարարներուն եւ սկսած է նիւթապէս օգնել իր նոր գործակիցներուն» եայլն: Այս պարագան ցոյց կուտայ թէ որ չափով պատկառելի կեդրոնական վարչութիւնը անտեղի իրարանցումի եւ նուաստացուցիչ կացութեան մատնուած է...:

#### Դոկտ. Արշավիր Կէօնճեանի Ֆորմիլը՝ Դպրոց Փակելու Մասին

«Դպրոց սը բանալը գեղեցիկ, ազգաշէն աշխատանք սըն է, բայց դպրոցը արդարացնելու է իր գոյութիւնը կրթական իր մակարդակով, իր աշակերտութեան թիւով եւ ի վերջոյ, պիտաճնով: Այլապէս դպրոց սը, պարզապէս որ հայ դպրոց է, գոյութիւն ունենալու իրաւունք չունի»: Այս յայտարարութիւնը ՀԲԸՄ-ի Փոխ Ատենապետ Դոկտ. Արշավիր Կէօնճեան ըրաւ անցեալ տարի Սեպտեմբերին, Սաութֆիլտի մէջ, Միչիգան, ԱՄՆ, Պր. Յակոբ Վարդիվառեանի հետ հարցազրոյցի սը ընթացքին, որ լոյս տեսաւ Մարտ 14, 2009-ին Հայրենի «Ազգ» թերթին մէջ: ([www.azg.am](http://www.azg.am) կայքէջ, Արիսիվ- «Մեր Հանդիպումները»):

Արդարեւ տրամաբանական կը գտնենք Դոկտ. Կէօնճեանի ֆորմիլը (սահմանումը) որ հաւանաբար ներկայիս իբրեւ ուղեցոյց-լապտեր կը գործածուի ՀԲԸՄ կեդրոնական վարչութեան կողմէ եւ ատով կ'առաջնորդուի երբ դպրոց փակելու որոշում կ'առնէ:

#### Բազմաթիւ Դպրոցներ Փակուեցան

Որքան որ գիտենք վերջին տասնամեակներուն Սփիւռքի տարածքին փակուեցան բազմաթիւ այլ դպրոցներ եւս, որոնց փակուելուն պայմաններն ու պարագաները թէեւ ծանօթ չեն մեզի, բայց եւ այնպէս կրնանք կռահել որ անոնք գուցէ չէին լրացներ Դոկտ. Կէօնճեանի վերեւ յիշուած պայմանները:

#### Բայց Ինչո՞ւ Մեկգնեանը

Այս այսպէս ըլլալով հանդերձ, հիմա հոս դարձեալ պիտի ուզէինք անդրադառնալ Մեկգնեան Կրթական Հաստատութեան փակման ցաւոտ հարցին: Բայց ինչո՞ւ փակուեցաւ Մեկգնեանը: Այս հարցումը դեռ եւս կը չարչարէ մեր միտքերը, քանի որ տրուած պատճառաբանութիւնները արդարանալի չեն:



## Հ.Բ.Ը. Միութեան Մելգոնեան Կրթական Հաստատութիւն Ճշմարտութեան Սիրոյն

### «Մելգոնեան Սանուց Միութիւն եւ Բարեկամներ» կազմակերպութեան խօսքը

#### Պր. Սարգիս Պչագճեանի Տեղեկագիրը

Մելգոնեանի փակումը Յունիս 2005-ին իր բոլոր բացասական հետեանքներով՝ ապահովաբար Սփիւռքի հրատապ հարցերէն մին է, եթէ ոչ ամէնէն հրատապը: Ամէնայնդէպս, կրնանք վստահ ըլլալ որ Մելգոնեանը լի ու լի եւ նոյնիսկ անելիով կը լրացնէր վերոյիշեալ երեք պայմանները: Ի դէպ, մեր տրամադրութեան տակ ունինք ՄԿՀ Հոգաբարձութեան Ատենապետ Պր. Սարգիս Պչագճեանի Նոյ. 3, 2003-ի ընդարձակ տեղեկագիրը, ինչպէս նաեւ ՄԿՀ վերջին շրջանաւարտից հանդիսութեան, Յունիս 12, 2004, Պր. Պչագճեանի արտասանած ճառը, ուր՝ հաաստի վիճակագրական տուեալներով, Մելգոնեանի ընթացիկ կացութեան եւ ապագայի կարելիութիւններուն մասին դրական եւ յուսալի պատկեր մը կը ներկայացուի:

Ըստ այս տեղեկագրին՝ (ա) վերջին ութ տարիներուն աշակերտութեան թուաքանակի աճը հասած էր 251-ի: Յարմարութիւններ կային այդ թիւը բարձրացնելու մինչեւ 300-ի, բայց կեդրոնէն կը հրահանգուէր աշակերտութեան թիւը 200-ը չ'անցնել պիտակէի դժուարութիւն չ'ստեղծելու համար: (բ) Ուսումնական մակարդակը աննախընթաց բարձունքի վրայ էր շրջանաւարտներուն 90 տոկոսը առանց դժուարութեան Երոպական եւ Ամերիկեան համալսարաններու մէջ կը շարունակէր բարձրագոյն ուսումը: (գ) Մելգոնեանի եկամուտը եւ ամավարկը նոյնպէս յաւելում կրած էր շնորհիւ Կիպրոսի բարեխնամ կառավարութեան յատկացումներուն, Մելգոնեան Հիմնադրամէն, Մելգոնեան առեւտրական շէնքէն, ուսանողներէն ստացուած հատոյթներէն, եւայլն, այս բոլորը դպրոցը ինքնաբաւ դարձնելու կարելիութիւններ կը ստեղծէին:

Առաւել, կայ նաեւ Մելգոնեան բարերարներուն Ազգին թողած անձեռնմխելի աւանդն ու մասնաւոր անոնց պայծառ տեսլականը եւ փափաքը «որ Մելգոնեան կրթական այս հաստատութիւնները տեւեն դարձեալ որ ու ըլլան լուսաւորութեան վառարաններ տալու համար հայ ազգին, հայ հայրենիքին եւ մարդկութեան օգտակար եւ պարկեշտ նկարագրով անդամներ»:

#### Կեդրոնական Վարչութեան Զօրավիգը...

Ուրախալի եւ քաջալերական է իմանալ Դոկտ. Կէօնճեանի վերոյիշեալ հարցազրոյցէն թէ՛ կեդրոնական վարչական ժողովը վերջապէս հասած է այն եզրակացութեան որ վերեւ յիշուած երեք պայմանները եթէ լրացնեն Միութեան Կրթական մեր օճախները, պիտի ունենան զօրավիգը կեդրոնական վարչութեան: Վստահ ենք որ հազարաւոր Մելգոնեանցիներ եւ բարեկամներ ցնծութեամբ պիտի ողջունեն այս յուսադրող յայտարարութիւնը: Այս կապակցութեամբ անոնք պատրաստ են եւ յօժարակամ, յանձն առնելու ամէն գոհողութիւն: Մեր բոլորին ջերմ փափաքն ու երազն է վերաբացուած տեսնել այս ազգօգուտ հաստատութիւնը որպէսզի ան կարենայ շարունակել իր առաքելութիւնը սփիւռքի մէջ, որպէս ամրոց հայեցի դաստիարակութեան եւ հայապահպանման:

#### Մելգոնեանը Պէ՛տք է Վերաբացուի...

Մեծ դեր վիճակուած է հայկական վարժարաններուն՝ պահպանելու համար արեւմտահայերէն լեզուն եւ մշակոյթը, որոնք վտանգուած են եւ ենթակա՝ անհետացման, եթէ չկարենանք բաց պահել մեր վարժարանները սփիւռքի մէջ: Մելգոնեանը ըլլալով միակ գիշերօթիկ երկսեռ հաստատութիւնը արտերկրի մէջ, պէտք է վերաբացուի եւ վերակազմուած՝ շարունակել իր առաքելութիւնը:

#### «Մելգոնեան Կրթական Համալիր»ը եւ Կիւմրիի Սառնարանը...

ՀԲԸ-ը ներկայիս կը ֆինանսաւորէ միայն հայրենական ծրագիրներ: ՀԲԸ-ի ղեկավարութեան կողմէ՝ ծրագրուած, Հայաստանի մէջ հիմնուելիք «Մելգոնեան Կրթական Համալիրը» կամ «Նոր Համալսարանական Աւանդ» պիտի կարենա՞յ Կիպրոսի ՄԿՀ-ի դերը ստանձնել եւ զայն փոխարինել: Արդարեւ Հայաստանի «Մելգոնեան Կրթական Համալիրին» մասին տրուած կցկտոր տեղեկութիւնները հաւատք եւ յոյս չեն ներշնչեր, տրուած ըլլալով որ ծրագիրը տակաւին մինչեւ հիմա չէ յստակացած, խարխալաբայլ կ'ընթանայ, եւ չէր մտադրուած Մելգոնեանը

փակելէ առաջ...: Կ'ըսուի թէ հոն պիտի հիւրընկալուին աշխարհի տարբեր երկիրներէ շուրջ 400 հայ համալսարանական ուսանողներ, եռամսեայ կամ կիսամսեայ դրութեամբ: Անոնց պիտի դասաւանդուի Հայոց լեզու, հայ գրականութիւն, հայոց պատմութիւն, անոնք հայկականութեամբ պիտի թրծուին, այս ձեւով ՀԲԸ-ի ղեկավարութիւնը նպաստած պիտի ըլլայ հայապահպանութեան եւ հայեցի դաստիարակութեան: Միաժամանակ սփիւռքահայ երիտասարդ ուսանողները «պիտի կարենան տիրանալ համարժէք վկայականներու Հայաստանի մէջ գործող Հայկական, Ամերիկեան, Ֆրանսական, Ռուսական համալսարաններէն»... եւայլն եւ այս բոլորը առաւելագոյն վեց ամիս կեցութեամբ՝ այս «կոթողային հաւաքավայրին» մէջ...:

Բայց ինչո՞ւ «Մելգոնեան» անունը: Գլխաւոր ճարտարապետ Արիս Ադամեան կը բացատրէ.- «Որովհետեւ անոր գոյութեան երաշխիքը հանդիսացող ֆինանսաւորումին մեծագոյն մասը պիտի գոյանայ շնորհիւ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան կալուածներուն մասնակի հիմնադրամէն»:

Ուրեմն Մելգոնեանի կալուածները պէտք է ծախել որպէսզի կարելի ըլլայ իրականացնել այս «Համալիրին» մեծածախս շինարարութիւնը:

Մեր միտքերուն մէջ տակաւին դարձ է Հայաստանի երկրաշարժէն անմիջապէս յետոյ ՀԲԸ-ի ղեկավարութեան կողմէ՛ կառուցուած հինգ միլիոն տոլար արժողութեամբ Կիւմրիի հսկայական սառնարանը, որ քանի մը տարի առաջ ծախուեցաւ միայն 150,000 տոլարի, քանի որ սխալ ծրագրուած ըլլալուն պատճառաւ գործածական բան մը չէր, այլ պարզապէս սքանչելի «ձերմակ փիղ» մը ... (White Elephant)...

«Մելգոնեան Կրթական Համալիրը» որ Կիւմրիի սառնարանէն տասնապատիկ անելի ծախսալից ծրագիր մըն է, նկատի առնելով բոլոր տուեալները, ամենայն հաւանականութեամբ, Կիւմրիի սառնարանին ձակատագրին կրնայ ենդարկուիլ..., դարձեալ յուսախափութեան մատնելով ՀԲԸ-ի հազարաւոր հաւատարիմ նուիրատուները :

#### Կիպրոսի Մելգոնեանը՝ Ի Սպաս Հայրենիքի Յառաջդիմութեան եւ Բարգաւաճման

Մելգոնեան, իր բացառիկ աշխարհագրական դիրքով Կիպրոսի նման հիւրընկալ եւ բարեացակամ Երոսմիութեան անդամ երկրի մը մէջ՝ դէպի Երոպա բացուող դուռ մը կրնայ ըլլալ Հայաստանի համար: Հայաստանէն ամէն տարի որոշ թիւով ուսանողներու ներգրաւումը Մելգոնեանէն ներս՝ ո՛չ միայն պիտի սատարէ որ անոնք ստանան բարձրորակ երկրորդական ուսում եւ պատրաստուին երոպական եւ ամերիկեան համալսարաններ ընդունուելու, որպէսզի մասնագիտութիւններ ձեռք բերելով անոնք վերադառնան ու ծառայեն հայրենիքի յառաջդիմութեան եւ բարգաւաճման, այլ նաեւ պիտի նպաստէ Սփիւռք-Հայաստան կապերու առաւել սերտացման:

#### Վերջացնելով Մեր Խօսքը...

Վերջացնելէ առաջ կ'ուզեմք անցնել հետեւեալը.-  
Պր. Պալիկեան յոխորտանքով կը յիշէ իր ընտանեկան բոլոր պարագաները որոնց համար «Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը բացառիկ նշանակութիւն եւ կարեւորութիւն ունեցած է», իր երկու զաւակները օգտուած են ՄԿՀ-ի բարիքներէն եւ Մելգոնեանի շրջանաւարտներ են: Պր. Պալիկեան վստահաբար գոհ է ՄԿՀ-ի իր զաւակներուն ջանքած դաստիարակութենէն, հայեցի կրթութենէն: Բայց եւ այնպէս ան կ'ուզէ նոյն այդ բարիքները զլանալ ուրիշներուն, ՄԿՀ-ի փակումին թէզը պաշտպանելով:

#### «Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ»

Կազմակերպութիւն  
Melkonian Alumni and Friends,  
www.melkoniannews.org  
admin@melkoniannews.org